

# Գ Ր Ա Կ Ա Ն

## ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏՔՈՎ

Բ. Մաս

### ԱՐԴԻԻՆԱԻԷՏ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Գլ. Գ.

Միլտոնն Ռայտը, որի վաճառականական յայտնի տունը տարին մի քանի միլիոնի շրջանառութիւն էր կատարում, վերջին ժամանակները շատ տխուր էր ու մռայլ։ Նա, որ միշտ հանդարտ էր, իւր գործին հետևող, այժմ իւր գրասենեակում շատ անգամ անուշադիր էր մնում կառավարիչների կարևոր զեկուցումներին, երբեմն էլ կոպտութեամբ ընդհատում էր զեկուցողին և ապա ուշքի գալով՝ ներողութիւն խնդրում։ Բոլորն էլ նկատում էին, որ նրա մէջ մի ինչ որ փոփոխութիւն է կատարւում։ Անշուշտ մի անախորժ բան էր պատահել, բայց ինչ էր այդ, ոչ ոք չէր համարձակւում հարցնել։ Միլտոնն Ռայտը, որ ինքն իւր սեփական ուժերով էր ճանապարհ հարթել իւր համար և ոչինչ բանից մի այդպիսի մեծ վաճառականական ձեռնարկութիւն ստեղծել, չէր սիրում, որ յիւր գործերի մէջ խառնուեն, այդ խօսքերով պատասխանեց նա նոյն իսկ իւր կնոջը, երբ նա հարցրեց.

— Ասան, Միլտոն, ինչ է պատահել քեզ։ Գու շատ ես փոխուել։

Ռայտը պատասխանեց.

— Ոչինչ, անհանգիստ մի լինիր։ Այդ վաճառականական գործ է, քեզ չի վերաբերում։

— Այս անգամ ներիր, որ քեզ հետ չեմ կարող համաձայնել, առարկեց կինը։ Գու լաւ գիտես, որ ես երբէք չեմ խառնուել քո առևտրական գործերի մէջ, սակայն

այստեղ գործը քեզ է վերաբերում և ոչ թէ առևտուրին։  
Վերջին երեք-չորս օրուայ ընթացքում դու բոլորովին  
հալուժաց ես եղել։ Չես ուտում, չես խմում, մարդու  
հետ չես խօսում։ Ես առաջին անգամն եմ քեզ այդպէս  
տեսնում։ անշուշտ մի վիշտ կրճում է քո սիրտը։ Այդ  
ամենը ինձ է վերաբերում շատ մեծ չափով։ Թող քո  
առևտրական գործերը վճռուին քո գրասենեակներում,  
սակայն քո հոգու հանգստութիւնը, քո սրտի անդորրու-  
թիւնը ընտանիքի խնամքի ներքոյ պիտի լինի։ Ընտանիքը  
մի խաղաղ նաւահանգիստ է, որ հանգստանալու պիտի  
գնան նրա բոլոր անգամները կեանքի ամեն տեսակ փո-  
թորիկներէից յետոյ։

Կնոջ հոգատար խօսքերն արդեօք ազդեցին Ռայտի  
վրայ, թէ հէնց իւր համար անտանելի էր դարձել լուելը,  
նա անսպասելի կերպով ասաց.

— Ես մեծ վնաս եմ կրել։ Բրուկսի առևտրական  
տունը, որի հետ երկար տարիներէ ի վեր մեծ գոր-  
ծեր եմ ունեցել, անանկացել է։ Ես ստոյգ տեղեկութիւն  
ունիմ, որ այս օրերս Վրուկս և որդի տունը սնանկ կը  
հրատարակուի և ես դրանով կը կորցնեմ երեք հարիւր  
հազար ուրբուց աւելի։ Այդ բանը շատ վատ կազդի իմ  
առևտրական գործերի վրայ։ Ներիր, որ քեզ ասացի։ Ես  
չէի կամենում քեզ անհանգստացնել, ուզում էի ինքս մե-  
նակ կրել այդ վիշտը։

— Բոլորովին ի գուր, հանդարտութեամբ ասաց կինը։  
Իմ կարծիքով այստեղ շատ էլ ցաւելու բան չկայ։ Իսկա-  
պէս դու դրանով ինչ մի կարևոր բան ես կորցնում։  
Եթէ դու, երեք հարիւր հազար կորցնելու փոխարէն աշ-  
խատած լինէիր, միթէ աւելի երջանիկ կըլլայիր քեզ-  
եւ, ընդհակառակն, երբ այժմ այդքան կորցրել ես, միթէ  
զրկուել ես երջանիկ լինելու հնարաւորութիւնից։ Միթէ  
ես և երեխաներդ առաջուանից աւելի պակաս պէտք է  
սիրենք քեզ։ Միթէ պէտք է զրկուես այն յարգանքից,  
որ քո ծանօթները տածում են դէպի քեզ։ Ո՛չ և ո՛չ  
Միթէ, վերջապէս, դու պէտք է ազբատանսս դրանով։

վնտ կերակրուես, նեղութեամբ ապրես, կեղտոտ հագնուես, կրկին ոչ և ոչ: Առաջ էլ հօ դու օրը երկու նախաճաշ կամ երկու ճաշ չէիր անում: Միաժամանակ հօ երկու տան մէջ չէիր բնակուում, երկու ձեռք շոր միանգամից հօ չէիր հագնում, իսկ մնացած բաներում ինչ վնաս ունիս: Նոյն ճաշը, նոյն տունը, նոյն ընտանիքը, ինչ որ առաջ ունէիր, այժմ էլ դարձեալ քոնն են: Հետեապէս այս տեսակէտից ցաւելու ոչինչ չկայ: Մնում է երեխաների ապահովութիւնը ու գործիչ յաջողութիւնը, ընդարձակումը: Այդ մասին էլ հէնց ես ինքս ուզում էի քեզ հետ խօսել, անկախ այդ տհաճ դէպքից:

— Դու գիտես, որ ես գործում եմ «Քրիստոսի հետքով» կոչուած խմբի մէջ: Մեր այդ խումբը սաստիկ զրաւել է ինձ: Դեռ աւելին կասեմ՝ սթափեցրել է ինձ, ստիպել է յետ նայելու դէպի անցեալը և տեսնելու թէ որքան աւելորդ ու անպէտք բաներ ենք հաւաքել տարիների ընթացքում, որոնց անպէտքութեան մասին երբէք չենք մտածել: Այժմ այլ ևս ոչ մի ցանկութիւն չունիմ հաւաքելու ու շատացնելու այդ աւելորդ ու անպէտք բաները: Վերցնենք թէկուզ երեխաներին, նրանց համար միթէ անպէտք և նոյն իսկ վնասակար բան չէ մեծ ժառանգութիւն թողնելը: Բժիշկները վնասակար են համարում երեխաներին չափից աւելի տաքացրած սենեակում, բմբուլէ տեղաշորում քնացնելը: Սովորեցնելով երեխաներին կատարեալ անհոգութեան, աւելորդ փարթամութեան, դրանով մենք նրանց վնասակար փափկասիրութեան ենք ընտելացնում: Իսկ այդ նրանց թուլացնում է միանգամայն: Նայիր մեր բոլոր միլիոնատէրերի երեխաներին, ինչպիսի դժբախտ արարածներ են նրանք, ողորմելի, կամազուրկ մարդիկ: Հայրերը արտասովոր եռանդ են ցոյց տուել, միլիոններ են աշխատել, իսկ որդիքը ոչ միայն աշխատել չեն կարողանում, այլ և ալարում են ապրել ու պատրաստի հարստութիւնից օգտուել: Պէտք է երեխաներին պահպանել աւելորդ փարթամութիւններից ու վնասակար փափկասիրութիւնից, երեխաների համար

ամենալաւ ժառանգութիւնը իրանց ներսը պէտք է գանձուած լինի և ոչ թէ նրանց շուրջը դիզուած: Երեխաների մէջ պէտք է ինքնագործունէութիւն զարգացնել, աշխատանքի սէր զարթեցնել: Պէտք է նրանց այնպէս դաստիարակել, որ ինչքան էլ նեղ դրութեան մէջ ձգելու լինի նրանց բախտը, դարձեալ կարողանան ոտքի կանգնել: Յիշիր քո անցեալը, 'ու սիրում ես ասել, որ շատ լաւ միտդ է այն ժամանակը, երբ գրպանումդ երեք ռուբլի ունենալով՝ քեզ արդէն հարուստ էիր համարում: Տարիների աշխատանքով մի քանի ռուբլիներից դու միլիոնների գործ ստեղծեցիր: Երեք հարիւր հազարի կորուստը այդ գործը չի ոչնչացնիլ: Երեխաները չեն մնալ աղքատ, և եթէ նոյն իսկ մեր ամբողջ կարողութիւնն էլ ոչնչանար, մեր երեխաները, փառք Աստուծոյ այնպէս են դաստիարակուած և աշխատանքի վարժուած, որ նոքա իրենք հէնց մի մեծ դրամագլուխ են կազմում և կարող են իրենց համար նոր գործ սկսել:

— Իդճով խօսելով, երեք հարիւր հազարի կորուստը երեխաների նկատմամբ չէ ինձ անհանգիստ անում, ասաց Միլտոն Ռայտը, կնոջ խօսքերից բաւական հանգարտուած:— Ինձ աւելի մտահոգութիւն է պատճառում մեր առևտրական տան յաջողութեան խնդիրը: Երեք հարիւր հազարը փոքր գումար չէ նոյն իսկ միլիոնների գործի համար, այն ինչ հէնց այս տարի ես մտադիր էի ընդարձակելու մեր գործը:

Կինը ժպտաց.

— Ես այդպէս էլ հաւատացած էի: Հէնց այդ խօսքերին էին սպասում. մի միայն ուզում էի, որ դու ինքդ, առանց իմ հարցնելու, ասէիր:

— Ինչի համար:

— Նրա համար, որ ամբողջովին իրենց գործի մէջ խրուած մարդիկ ամենքն էլ այդպէս են վարւում, ինչքան էլ որ դատարկ ու անմիտ լինէր այդ գործը: Կարծեմ ես քեզ չեմ պատմել, թէ ինչպէս ամուսնանալուց առաջ դաստիարակչուհու պաշտօն ունէի մի իշխանուհու

ընտանիքում: Իշխանուհին մեծ կարողութիւն ունէր և ապրում էր Փարիզում: Նա ունէր մի տղայ, արդէն տան և եօթ տարեկան պատանի, սակայն ոչինչ չէր անում, չէր սովորում, չէր կարդում և բոլոր ժամանակն անց էր կացնում խաղատեղում, որտեղ առաջին գնդակ խաղացողն էր համարուում: Երբ ուսուցիչները գանգատուում էին մօրը, նա յուզուած պատասխանում էր. «Ինչ արած, տղաս ամբողջովին գնդակխաղի է նուիրուել»: ապա հպարտութեամբ փայլող աչքերով նա աւելացնում էր. «Բայց դրա փոխարէն էլ չէ՞ որ նա առաջին գնդակ խաղացողն է Փարիզում»:

— Ես, վրդովուելով, ասում էի նրան. «ասացէք խընդրեմ, իշխանուհի, ինչ միտք ունի նրա առաջին խաղացող լինելը: Մի՞թէ դրա մէջ է կեանքի ամբողջ խորհուրդը. մի՞թէ կարելի է դրանով բաւականանալ»:

Իմ կարծիքով, սիրելի Միլտոն, բանը գործի մեծութիւնն ու ընդարձակութիւնը չէ, այլ նրա մէջ եղած խորհուրդը, միտքը: Ես շատ անգամ եմ հարց տուել լեռներ բարձրանալ սիրողներին, թէ ինչն է գրաւում նրանց դէպի լեռների բարձունքները և ստիպում ամեն տեսակ դժուարութիւններ յանձն առնելու, նոյն իսկ վտանգի ենթարկուելու: Նրանցից շատերը անկեղծօրէն խոստովանել են.

— Այն հպարտ գիտակցութիւնը, ինքնաբաւականութեան զգացումը, որ ամեն տեսակ խոչընդոտների յաղթելով՝ հասել ես մի այնպիսի բարձրութեան, ուր քչերն են կարողանում ելնել:

Դուրս է գալիս իւր տեսակի մի լեռնային մրցութիւն. այսօր բարձրացել ես հինգ հազար ոտնաչափ, վաղը կբարձրանաս վեց հազար, ապա եօթ, ութ և աւելի:

Համաձայնիք, թանկագին Միլտոն, որ քո գործն էլ իւր տեսակի առևտրական մի մրցումն է: Անցեալ տարի եղել է երկու միլիոնի շրջանառութիւն, այս տարի երկուսու կէս, եկող տարի պէտք է լինի երեք միլիոնի և այլն: Բայց ինչո՞ւ. ո՞ւմ համար: Այս մասին հաշիւ չի տրուում:

Այն ինչ, ինձ թւում է, թէ ինչպէս ամեն մի լուրջ գործի, նոյնպէս և վաճառականութեան մէջ կարող է լինել ոչ թէ միայն գործնական, այլ և գաղափարական մի խորհուրդ:

Լեռներ բարձրանալ սիրողներից մէկը ինձ ասում էր, թէ ինքը այն պատճառով է սիրում լեռների բարձունքների վրայ գտնուել, որովհետև այնտեղ օդը կուսական մաքրութիւն ունի, այնտեղ մարդ իրեն էլ աւելի մաքուր է զգում, այնտեղ չկան «մարդուկներ» իրենց չնչին կուպէկանոց հաշիւներով, այնտեղ մարդ ինքն էլ գէթ մի վայրկեան գաղարում է «մարդուկ» լինելուց և իրեն աւելի մօտ զգում Աստուծուն:

— Ահա ես սորա մէջ եմ գտնում, — ասում էր նա, լեռներ բարձրանալու խորհուրդը, որի հետ կապուած բոլոր նեղութիւնները սիրով եմ տանում:

Այդպիսի մի բարձր խորհուրդ կարելի է գտնել նաև առևտրական ձեռնարկութեան մէջ և մենք պէտք է աշխատենք գտնել մեր արած խոստումից ու խմբին միանալուց յետոյ: Այժմ ես քանի աւելի եմ մտածում, այնքան աւելի ու աւելի եմ ամաչում մեր անցեալ կեանքի համար: Դու ունիս հազարի չափ ծառայողներ, ի՞նչ են անում նրանք, ի՞նչ բանի է ծառայում քո ամբողջ գործը: Ոմանք ամբողջ տարիներ համրիչի հատիկներն են չխկիխկացնում, ոմանք թուեր են համրում, ոմանք էլ արշին են չափում: Շարունակ նոյն համրիչի հատիկները, թուանշաններն ու արշիները և այսպէս անվերջ, ամեն տարի, ամբողջ կեանքը, երբ մարդ մտածում է, վրան սարսափ է գալիս. ամբողջ կեանքը համրել ու չափել և միմիայն չափել ու համրել և դրա մէջ տեսնել կեանքի ամբողջ խորհուրդը, ի՞նչ մարդ, ողորմելի գործ, Պէտք է գործի մէջ խորհուրդ, գաղափար մտցնել. ես կարծում եմ, որ հնարաւոր է առևտրական գործին ևս բովանդակութիւն տալ, գաղափարական խորհուրդ ներշնչել:

— Անշուշտ, համաձայնեց Ռայտը. միայն այն ժամաժանակ պէտք է գործը ուրիշ հիմունքների վրայ դնել:

— Եւ այդ անհրաժեշտ է ասաց կինը: Աւետարանը փոխում է մեր կեանքի հիմունքները և նրան ուրիշ ընթացք տալիս: Ուզում ես հետևել նրան, Քրիստոսի հետքով գնալ, քո գործն ևս դիր աւետարանական հիմունքների վրայ:

— Այդ այնքան էլ հեշտ չէ, ասաց Ռայտը: Իմ գործի նման խոշոր ձեռնարկութիւնը նոր հիմունքների վրայ գնելը շատ լուրջ և երկար խորհրդածութիւն է պահանջում:

— Գու էլ խորհիր, վերջացրեց կինը: Յամենայն դէպս այդ մասին եղած մտածմունքները շատ աւելի արդիւնաւոր կը լինեն, քան երեք հարիւր հազար ուրբու կորստի մասին եղածը:

Միլտոն Ռայտի իւր կնոջ հետ ունեցած այս խօսակցութիւնից մի շարաթ էր անցել: Խանութներում և պահեստներում ծառայողները դեռ ևս շարունակում էին նոյն տարակուսանքների մէջ մնալ: Ոչ ոք չէր կարողանում հասկանալ, թէ ինչ է պատահել իրանց տիրոջը: Ճիշտ է, նա այլ ևս մութ ու մռայլ չէր շրջում, սակայն դրա փոխարէն ամբողջ օրերով մինչև ուշ գիշեր նստած էր լինում այլ և այլ հաշիւների առաջ: Նա իւր մօտ էր կանչում իրար յետևից պահեստների, գրասենեակի և խանութների կառավարիչներին: Ռայտը ճիշտ տեղեկութիւններ էր պահանջում բոլոր ծառայողների մասին, թէ ով ինչքան ժամանակ է ծառայում և որքան է ստանում, որքան ծախս են նստում շինութիւնները, ուրիշ ինչպիսի ծախսեր են լինում:

Ծառայողները սկսում էին անհանդիստ լինել՝ մտածելով թէ մի գուցէ իրանց տէրը ուզում է դադարեցնել իւր գործը կամ մի ուրիշին յանձնել:

Սակայն այդ կասկածները ի չիք դարձան մի նորութեան լուրով, Բաժանմունքների կառավարիչները յայտարարեցին ամենքին, որ իրենց տէրը միտք ունի կենդանական պահեստի մեծ շինութեան մէջ իւր բոլոր ծառայողների համար երեկոյթ սարգելու, որին ներկայ կը լինի

ինքը իւր ամբողջ ընտանիքով և բոլոր ծառայողներին և սհրաւիրում է իրենց կանանց, մայրերի, քոյրերի և մեծ երեխաների հետ: Առաջարկուում էր իրենց միջից կազմել երգեցիկ և նուագածու խումբ, եթէ ցանկութիւն յայտնողներ լինին: Ծառայողները յատկապէս երիտասարդները, իրարով անցան: Դուրս եկաւ, որ նրանցից շատերը թէ լաւ ձայն ունէին և թէ երաժշտական ընդունակութիւն: Կազմուեցաւ ոչ շատ մեծ, բայց մի լաւ երգեցիկ, նոյնպէս և նուագածու խումբ: Նրանցից մի քանիսը սիրուն նուագում էին իրիւ սողիստներ: մէկը ջութակ, միւսը ֆլէյտա, երրորդը դաշնամուր: Դուրս եկան լաւ առողջանութեամբ կարգացողներ, երևաց, որ նրանցից մէկը շատ շնորհքով պատմող է: Սկսեցին կրկնութիւններ անել:

Ազատ ապրող ամուրի երիտասարդները, որոնք երեկոները կամ ձանձրանում էին մենակութիւնից իրենց կահաւորուած սենեակներում և կամ ժամանակ էին անցնում այս կամ այն կաֆէ-շանտաններում, իրենք իրենց թափ տուին: Բողոքն էլ համակուեցին մի տեսակ սթափեցնող աշխուժութեամբ: Ոմանք իրանք մասնակցում էին կրկնութիւններին, ոմանք պատրաստուում էին գրա համար, իսկ ոմանք էլ միմիայն լսում էին:

Այս ինչ է նշանակում.— հարցնում էին իրար ծառայողները.— Մեր տէրը մի խիստ գործնական և պահանջկոտ մարդ էր և յանկարծ սկսել է հետաքրքրուել երեկոյթով, յաճախ գալիս է կրկնութիւններին և փորձերին:

— Զլինի՞ թէ մի որ և է յօբելեան ունի կատարելու մեր տէրը, գուցէ իւր արծաթեայ հարսանիքը պիտի տօնէ և կամ իւր գործարանի մի նշանաւոր տարեդարձը պիտի կատարէ, այսպիսի հարցեր էին տալիս փոքր ծառայողները գրասենեակի կառավարիչներին, որոնք երկար խօսելու առիթ էին ունենում իրենց տիրոջ հետ:

Ոչինչ չգիտենք, — պատասխանում էին նրանք: — Կարծես առանձին մի բան չէ նախատեսուում: Մեր տէրը ոչ մի խօսք չի ասում այդ մասին: Նա խօստանում է բա-

ցատրել այդ ամենը երեկոյթին։

Այժմ,—ասում է նա,—դեռ ինձ համար ամեն ինչ չի պարզուած և դեռ վերջնական ծրագիր չի մշակուած իմ մտքում։

Վերջապէս հասաւ այնքան անհամբերութեամբ և հետաքրքրութեամբ սպասուած երեկոյն։ Պահեստի միջին յարկը, որ պատահաբար այդ միջոցին դատարկ էր, դարձրին մի շարք մտքուր, կօկիկ սենեակներ։ Մէկի մէջը թէյի բուֆէտ սարգեցին, միւսի մէջ լրագրներ և ամսագիրներ դրին, երրորդի մէջ շախմատի համար սեղաններ տեղաւորեցին։ Մնացած սենեակներում ծառայողներն ու իրենց ընտանիքները՝ զանազան խմբերի բաժանուած կենդանի խօսակցութեան էին բռնուած։

Հաճելի էր տեսնել, թէ ինչպէս երիտասարդ գործակատարներն ու հաշուապահները տօնական զգեստով, շրջում էին երեքարականութեամբ լուսաւորուած սենեակներում՝ գոհութեան զգացմամբ լցուած։ Նրանց դէմքերին պարզ կարելի էր կարդալ։

—Մենք այստեղ լիակատար իրաւունքով հիւրեր ենք։ Այս բոլորը մեզ համար է պատրաստուած։ Մենք այստեղ ծառայութեան մէջ չենք մեր տիրոջ մօտ, այլ նրա ընտանիքում՝ հիւր ենք։

Ուղիղ ժամը 6-ին բոլորը նստեցին կենդրոնական դահլիճում, որը աթոռների շարքերով և բեմի համար շինած բարձրութեամբ, յիշեցնում էր թատրոնական դահլիճը։ Բարձրութեան աջ կողմում դրուած էր ամբիոնը։ Բոլորն էլ նայում էին դէպի ամբիոնի կողմը, կարծես զգում էին, որ այդ օրուայ ժողովի համար ամենից հետաքրքրականը ոչ թէ երգեցողութիւնն ու երաժշտութիւնը պիտի լինի, այլ այն, ինչ որ պէտք է ասուի այդ ամբիոնից, եւ յիրաւի, երբ անմենքը տեղաւորուեցին, ամբիոն բարձրացաւ ինքը Միլտոն Ռայտը։ Դահլիճում լուսութիւն տիրեց և նա դիմեց ժողովականներին հետևեալ ճառով։

—Պարոններ, իմ յարգելի աշխատակիցներ և օգնա-

կաններս երբ ես սովորում էի դպրոցում, մենք ունէինք թուաբանութեան մի յայտնի ուսուցիչ։ Սովորաբար թուաբանութիւնը ձանձրալի առարկայ է համարուում։ Իսկ մեր դպրոցում ընդհակառակը, թուաբանութեան դասը մեզ համար հաճոյք էր և թուաբանական խնդիրները մենք վճռում էինք հանգստութեան ժամերին։ Դպրոցի տեսուչը իւր հրաժեշտի ճառի մէջ թուաբանութեան դասերի առթիւ ասաց մեզ.

Յիշեցէք, երիտասարդ բարեկամներ, որ չկան ձանձրալի և վատ առարկաներ, այլ կայ մի միայն ձանձրալի և վատ աւանդումն։ Նոյնն է և կեանքի մէջ։ Ոչ մի ազնիւ գործ կամ զբաղմունք չի կարող ձանձրալի ու վատ լինել, այլ կարող է ձանձրալի կամ վատ կերպով առաջ տարուել։

Այս կանոնը ես լիովին ընդունում եմ նաև ամեն մի առևտրական ձեռնարկութեան նկատմամբ։ Վերջին ժամանակներս ես շատ եմ մտածել վաճառականութեան մասին ու բազմակողմանի կերպով քննել այդ հարցը և պէտք է խոստովանեմ, որ իմ հանած եզրակացութիւններն այնքան էլ փայլուն ու մխիթարական չեն։

Ամենքը խոստովանում են, որ մեր օրերում վաճառականութիւնը մեծ ոյժ է ներկայացնում։ Նա անապատի մէջ մարդաշատ քաղաքներ է ստեղծում, պետութիւնների քաղաքականութիւնն է ղեկավարում։ Նա, վերջապէս, նոյն իսկ երկրի երեսն է փոխում։ Նորա համար լեռներ են քանդում, պարանոցները նեղուցի փոխարկում։ Բայց ի՞նչ տեսակի ոյժ է այդ։ Արդեօք նա համարուում է հաւասար արժէք ունեցող մտքի, գիտութեան կամ որ և է տաղանդի ներկայացրած ուժի հետ։ Առաջարկեցէք որ և է հին անուանի տան մի շառաւիղի առևտրական գործով զբաղուել։ Նա իրան վիրաւորուած կըզգայ։ Պետութեանց կառավարիչներն ու նախարարները իրենց քաղաքականութիւնը վարում են յօգուտ վաճառականութեան, բայց վաճառական դառնալը իրանց համար ստորացուցիչ են համարում։ Դիւանատունը, նախարարի գրասենեակը, պարլամենտի պալատը, գնդի զօրավարժու-

թեան հրապարակը, բեմը, նկարչի արհեստանոցը և գիտնականի ամբիւնը կամ աշխատանոցը նոյն իսկ նոր փայլ են տալիս ամենահին անուանե անգամ, իսկ խանութն ու վաճառականի գրասենեակը ինչ որ ստուեր են ձգում նրա վրայ, Ի՞նչ է դրա պատճառը: Ինչո՞ւ վաճառականի արշինն ու կշռեոքը այնպէս փառաւոր չէ, ինչպէս հեղինակի գրիչը, նկարչի վրձինը, զօրավարի սուրը, Ինչո՞ւ, վերջապէս, բոլոր լուսաւորեալ երկրներում հազարաւոր յուշարձաններ կան կանգնեցրած նկարիչների, գիտնականների, հեղինակների, զօրավարների, պետական ու հասարակական գործիչների համար, իսկ վաճառականի յուշարձան ոչ մէկը չկայ:

Ըսւրջ մտածողները, յատկապէս բարոյագէտները, բարոյականութեան քարոզիչները վաճառականական ոգին անգամ դատապարտում են:

Ի՞նչ է դրա պատճառը, հարցնում եմ կրկին: Ինչո՞ւ վաճառականութեան ոգին վիրաւորական նշան է համարուում: Մի՞թէ յիրաւի վաճառականութիւնը, միշտ և անպայման, եթէ ոչ դատապարտելի, սակայն անփառունակ մի զբաղմունք է, որն ընդունակ չէ մարդուն յուշարձան կանգնեցնելու, դափնիներով պսակելու:

Ես համոզուած եմ, պնդում եմ և պատրաստ եմ ապացուցանելու, որ այդպէս չէ: Յիշեցնում եմ իմ տեսչի խօսքերը: «Չանձրալի և վատ առարկաներ չկան, կայ միայն ձանձրալի և վատ աւանդումն»: Այդպէս է և կեանքի մէջ. ստորացուցիչ զբաղմունքներ կամ գործեր չկան, եթէ միայն ազնիւ են. սակայն գործերը կարող են վատ և ստորացուցիչ կերպով տարուել: Այս շատ յարմար է գալիս նաև վաճառականութեան համար: Սովորական վաճառականութիւնը անկանոն կերպով է տարուում: Ուղիղ չէ դրուած հիմնական խնդիրը:

Ընդհանուր յարգանք է վաստակում մի միայն այն գործը կամ զբաղմունքը, որն ի նկատի ունի ընդհանուրի բարիքը, որտեղ մարդ աւելի տալիս է, քան թէ առնում, որտեղ առաջին գծի վրայ է դրուած այս կամ այն

հանրամարդկային գաղափարը: Մեր սովորական վաճառականութեան մէջ այդ բանը չկայ: Առևտուրը որքան էլ շատ ընդարձակ լինի, որքան էլ շատ մարդիկ այդ գործով իրենց ապրուստը ճարելիս լինեն, այնուամենայնիւ տիրոջ գլխաւոր նպատակը իւր սեփական բարօրութիւնն է կազմում: Նրա համար առաջին տեղը իւր լեւնն է բռնում: Բոլոր մնացածները օգնում են նրան, ծառայում են նրան և մի միայն նրան: Գործի շահը կենդրոնանում է մի անձի շահի մէջ: Ուստի և վաճառականութիւնը, ըստ էութեան, դարձել է անձնական գործ, այլ ոչ թէ հասարակական, ինչպէս է, օրինակ, գիտութեան, գեղարուեստին կամ պետութեան ծառայելը:

Պէտք է փոխել իրերի այս դրութիւնը, վաճառականութեանը ուրիշ կերպարանք տալ և դարձնել առաջնակարգ կարևորութիւն ունեցող մի գործ, պէտք է առաջին տեղը դնել ոչ թէ ձեռնարկողի անձնական շահը և հարստանալու տենչը, այլ հասարակութեան օգուտը, որի կեանքը վաճառականը պարտաւոր է բարելաւել և բարձրացնել հասարակական բարեկեցութեան աստիճանը: Այն ժամանակ վաճառականութիւնը կըստանայ բարձր գաղափարական նշանակութիւն:

Որպէս զի մարդ բանականօրէն ապրի, ինչպէս յատուկ է բանական արարածի, այլ ոչ թէ անասունի, նա պէտք է իւր կեանքին իմաստ տայ: Գորա համար անհրաժեշտ են այնպիսի մարդիկ, որոնք իրենց հանճարի ոյժով զարթեցնէին մարդկութեան միտքը, բարձրացնէին և մաքրէին նրան: Այստեղից է ծագում գիտնականների, գեղարուեստագէտների, բարոյագէտների վեհ և փառաւոր նշանակութիւնը: Բայց որովհետև ամեն բանում աստիճականութիւն կայ, ուստի և նախ քան բարձր պահանջներին բաւարարութիւն տալը, մարդու համար անհրաժեշտ է, որ նա կուշտ լինի և հագուստ ունենայ: Այդ բանում մարդկանց ծառայելը նոյպէս իւր բարձր և, անկասկած, գաղափարական նշանակութիւնն ունի:

Զեռք բերուած և նոյն լուկ մշակուած կենսական

մթերքները պէտք է մատակարարել սպառողներին: Այդ արդէն վաճառականութեան գործն է: Արդիւնաբերողի և սպառողի միջև եղած տարածութիւնը որչափ կարելի է կարճացնել, որքան կարելի է լաւ ապրանք տալ և ըստ կարելւոյն արժան—ահա վաճառականութեան մեծ խընդիրն ու ծառայութիւնը, որ դարձեալ գաղափարական ծառայութիւն է: Այս գէսըում վաճառականը ամենից առաջ ոչ թէ իւր օգուտների մասին է մտածում, այլ հասարակութեան:

Բանուորը ձգտում է աւելի կարճացնել տալ բանւորական օրը, որպէս զի հնարաւորութիւն ունենայ փոքր ինչ հանգստանալու, կարդալու, մտածելու, խելօք խօսք լսելու: Գաղափարական վաճառականը նպատակ կարող է դնել սպառող իրերի հնարաւորութեան չափով աժան մատակարարելը, որպէս զի իւր անհրաժեշտ պահանջներին բաւարարութիւն տալուց յետոյ, սպառողի մօտ մի բան էլ մնայ բարձր հոգևոր պահանջներին բաւարարութիւն տալու համար: Երբ հացը թանդ է և մարդ չի կարող իւր համար հաց գնել, նա դժուար թէ թատրոն գնայ, եթէ այնտեղ նոյն իսկ Շեկսպիրից մի բան ներկայացնելիս լինին: Երբ միջոց չկայ կօշիկ գնելու կամ առհասարակ վայելուչ հագնուելու, հազիւ թէ մարդ գրքի փող տայ, առաւել ևս կազմել էլ տայ, թէպէտ և մի հանճարի գրուածք լինի այդ:

Վաճառականութիւնն այնպէս կարգաւորել, որ հնարաւորութիւն տրուի սպառողին իւր կենսական անհրաժեշտ պահանջներին բաւարարութիւն տալուց յետոյ՝ մի բան էլ պահել բարձր պահանջների բաւարարութեան համար, միթէ սա չէ նշանակում հասարակութեան բարիք անել, թէկուզ իւր օգուտների նուազման դնով: Ընթացք սա չի նշանակում գաղափարական գործ կատարել: Ահա այս ոգով էլ ես մտադիր եմ գործս առաջ տանելու: Այն ամենը, ինչ որ մինչև այժմ ես ասացի, ամենից աւելի ինձ էր վերաբերում: Այժմ ես դառնում եմ գէսի ձեզ: Իմ ճառի սկզբում ձեզ ինձ գործակիցներ և օգնական-

ներ անուանեցիւ ես կամենում եմ, որ այդ խօսքը գատարկ հնչիւն չլինի ես ձեզ յերաւի ինձ գործակցելու և օգնելու եմ հրաւիրում. կամենում եմ, որ դուք ընդարձակէք և շարունակէք գործը իմ ուղղութեամբ, Չգիտեմ ինչ դուրս կըգայ, բայց ես երազում եմ իմ, աւելի բաւ է ասեմ, մեր ձեռնարկութիւնը իսկական վաճառականութեան մի դպրոց դարձնել.

Ես հաշուել եմ բոլոր մուտքն ու ելքը և գտել եմ, որ հնարաւորութիւն կայ ապրանքներից շատերը արժանացնել և ծառայողների ռոճիկը աւելացնել. Բացի այդ, ես նախատեսնում եմ աւելի արագ բարձրացումն ծառայողների համար: Այն ծառայողներին, որոնք գործի մէջ եղել են 20—25 տարի, ես առաջարկում եմ բաց անել մի փոքրիկ անկախ գործ: Ճանաչելով նրանց ազնուութիւնն ու գործի հմտութիւնը, ես նրանց համար վարկ եմ բաց անում և առաջարկում եմ գործի սկզբի համար իմ փոքր ծառայողներից վերցնել 2—3 օգնականներ: Վաճառականական այդպիսի նոր ձեռնարկութիւնները կըլինին որպէս թարմ ճիւղեր արձակուած ծառի գլխաւոր բնից: Երբ ձեր սեփական գործը կամրանայ և կաճի, դուք էլ ձեզնից կարձակէք նորանոր ընձիւղներ: Այսպիսով ազնիւ և գործունեայ երիտասարդութիւնը հնարաւորութիւն կունենայ արագ առաջ գնալու ծառայութեան մէջ, իսկ հասուն տարիքում, որպէս պարզ և իւր ազնիւ աշխատանքի, նա կունենայ անկախութիւն և մի կտոր հացի ապահովութիւն: Ամենքն էլ յոյս կունենան և ոչ ոք երկիւղ չի կրիլ զառամեալ ձերութեան նկատմամբ:

Ահա, համառօտ կերպով, իմ նոր ծրագիրը առաջին անգամի համար: Ես այդ հատիկը կրում եմ իմ սրտի խորքում: Օգնեցէք ինձ անեցնելու նրան և տայ Աստուած, որ մենք ձեզ հետ միասին տեսնենք նրա առատ պտուղները:

Միլտոն Ռայտի ճառը իւր մաքի նորութեամբ, նոր, անսպասելի ծրագրով և որ գլխաւորն է, ծառայողների կեանքի պայմանները բարելաւելու անակնկալով զարմացրեց

ամենքին. Մի քանի վայրկեան խորին լուսթիւն էր տիրում. կարծես ամբողջ դահլիճը մարել էր. վերջապէս, առաջին կարգերից վերկացաւ գլխաւոր գանձապահը. մի պատկառելի ծերունի և ընդհատուող ձայնով գիմեց տիրոջը.

— Մեծարգոյ պ. Ռայտ, մենք ամենքս խորապէս յուզուած ենք Ձեր խօսքերից և ես չեմ կարող երկար խօսել. կասեմ կարճ. երկար ժամանակ է, որ ես ծառայում եմ ձեզ հետ, երեսուն տարի կրլինի, որ ես աշխատում եմ ձեր գործի մէջ և լաւ եմ ճանաչում Ձեզ. Դուք միշտ հիանալի հմտութիւն էք ցոյց տուել Ձեր գործի մէջ. Քաղաքի մէջ ոչ ոք ընդունակ չէ ձեզնից աւելի լաւ գլուխ բերել սրեւիցէ առետրական գործ. Դուք միշտ կարողանում էք բորսայում ձեռնտու գնով ապրանք առնել և աւելի ձեռնտու գնով ծախել. Բայց հաւատացէք մեր խօսքին, այստեղ հաւաքուած բոլոր ձեր ծառայողների խօսքին, դուք դեռ երբէք ձեր կեանքում այնպիսի յաջող առետրական գործ չէիք կատարել, ինչպէս այսօր. Դուք այստեղ՝ ամբիոնից արտասանած ձեր ճառով միանգամից գնեցիք հազար ամենաեռանդուն և ձեր գործին նուիրուած աշխատաւորներ. Ձեր սրտի դրամագլուխը՝ սէրը դուք յուսալի գործի մէջ գրեցիք. Մենք կարող կրլինինք պահպանել այն և աճեցնել. եւ յոյս ունիմ, որ դուք շուտով մեծ տոկոսներ կըսկըսէք ստանալ, միայն թէ այդ չի գրուիլ իմ ելեմտից գլխաւոր մտեանում, այլ այն մեծ գրքում, որի անունն է «Մարդկային կեանք». ես պատկերացնում եմ այսպէս, որ ամբողջ մարդկութիւնը պէտք է ներկայանայ մի բաժնետիրական ընկերութիւն՝ հիմնուած մարդկային սրտի գանձերը արդիւնաւորելու և մարդկանց կեանքը բարելաւելու նպատակով. Ձեմ կամենում քննել, թէ ինչ են արել այդ ընկերութեան համար ուրիշները, սակայն գիտեմ, որ դուք այսօր ամբողջապէս տուիք ձեր բաժինը և բացի այդ, մեզ էլ հնարաւորութիւն էք տալիս, հանապազօրգեայ հացը աշխատելով հանդերձ, այդ մեծ գաղափա-

րական գործի բաժնետէր դառնալ, թող մեր մասնաւոր առևտրական ձեռնարկութիւնը հանրամարդկային գործի արժանաւոր մի բաժանմունքը լինի, իսկ ձեզ՝ այդ գործը ձեռնարկողին՝ յայտնում ենք մեր շնորհակալութիւնը և մաղթում երկար կեանք:

Գանձապահը Միլտոն Ռայտին խոր գլուխ տուեց, իսկ դահլիճը դղրդաց բուռն ծափահարութիւններով: Միլտոն Ռայտը առաջ եկաւ, բարձրացաւ ամբիոն և ձեռքով նշան արաւ, որ հանդարտուին, տիրեց խորին լռութիւն:

— Ես միմիայն քննել և ընդարձակել եմ ծրագիրը, ասաց Ռայտ,— իսկ այդ նոր ծրագրի միտքը իմա չէ: Այդ միտքը տուել է ինձ իմ կինը, նա իւր կանացի զգայուն սրտով հասկացել է, որ մեր չոր ու ցամաք գործի մէջ մի ինչ որ բան պակասում է, որ մենք ամենքս կարծես թէ մեխուած ենք մի գործի, որպէս բարդ մեքենայ, սակայն մի ամբողջութիւն՝ մի կենդանի օրգանիզմ՝ չենք կազմում: Առաջինը նա ինձ հետ խօսեց, որ անհրաժեշտ է մեր փոխադարձ յարաբերութիւնները մէջ կեանք մտցնել, ջերմացնել այդ յարաբերութիւնները սրտի կրակով, որոնց հիմքը ոչ թէ միևնոյն արկղից ռոճիկ ստանալը պիտի կազմի, այլ ընդհանուր հասարակական գործին ծառայելը: Փոքր ինչ առաջ իմ անցկացրած ծանր բոլէներին նա քաջալերում և խրախուսում էր ինձ. նա բաց արեց իմ աչքերի գործնականութեան թանձր կապը, որի միջից էի նայում ես մինչ այդ իմ աշխատանքին և դրդեց ինձ վերստուգելու գործի ամբողջ ընթացքը: Ուստի և ամբողջ պատիւը իրաւամբ նրան է պատկանում, իսկ ես շնորհակալ եմ Աստուծուց, որ ինձ այսպիսի օգնական է տուել և ի սրտէ ցանկանում եմ ձեզ՝ երիտասարդներիդ, որ իւր ժամանակին այդպիսի օգնականները հանդիպիք: Լաւ կինը— դա մի այնպիսի հիմնաւոր գանձ է, որը ձեռք բերելուց յետոյ երբէք մարդ չի սնանկանալ:

Այս խօսքերը ասելով Ռայտը ամբիոնից իջաւ, մօտեցաւ իւր կնոջը և յարգանքով համբուրեց նրա ձեռքը: Երեխաները փաթաթուեցին իրենց մօր վզովը, իսկ ամ-

բոլոր շրջապատեց տիկին Ռայտին և բոլորն էլ համբու-  
րում էին նրա ձեռքը: Նրանցից ոմանք վաղեցին հարևան  
ծաղկեվաճառի խանութը, գրկերով ծաղիկներ բերին և  
սկսեցին շաղ տալ իրենց տիրոջ և տիրուհու վրայ: Իսկ  
նուազածուները վերցրին իրենց գործիքները և նուազե-  
ցին տուչ: Պատկերը հրաշալի էր: Կարծես թէ հազար  
հոգուց բաղկացած մի ահագին ընտանիք իւր ծնողների  
հարսանեաց տարեգարձն էր կատարում:

Նախ քան գրական երաժշտական բաժնին անցնելը,  
պէտք էր փոքր ինչ հանգիստ տալ: Ուստի և հանդէսը  
կարճ ժամանակով ընդհատուեցաւ: Ընդմիջման ընթացքում  
ամենուրեք կենդանի խօսակցութիւն էր տեղի ունենում:

— Կարծես թէ մի ծանր քար վայր ընկաւ կրճքիցս  
կամ թէ մի ծանր բեռ ուսիցս վերցրին — ասում էր գրա-  
սենեակի կառավարիչը:

Ես ձեզ հասկանում եմ, ասաց խանութների կա-  
ռավարիչը, — միանգամայն իրաւացի է ձեր ասածը: Ես էլ  
ինձ ուրիշ կերպ եմ զգում: Իրաւ է, մեր աշխատանքը  
այսուհետև էլ մնում է նոյնը, սակայն նա մի նոր խոր-  
հուրդ և բովանդակութիւն է ստանում:

Հնազանդ կարիքի հրամանին գնում ես գործի, աշ-  
խատանքի յետևից, բայց այդ անում ես ակամայ, աշխա-  
տում ես առանց ներքին մղման, առանց ոգևորութեան:  
Իսկ այժմ բացուում է քո առաջ գէպի անհունը ժանոզ  
ընդարձակ մի պատկեր: Միտեր Ռայտը ինձ պատմել է  
հարևանցի կերպով իւր ապագայ ծրագրների մասին:

— Երևակայեցէք, ասում էր նա ինձ, մեր գործը  
աճում, ընդարձակուում և մի շարք ճիւղեր է տալիս:  
Մենք ստեղծում ենք մի ահագին ֆիրմա: Նրա տրգիւնքի  
որոշ մասով գնում ենք մի մեծ հողաբաժին, մէկը միւսի  
յետևից զանազան շինութիւններ ենք կառուցանում,  
որոնք իրենց մէջ պարունակում են բնակարաններ բանուոր-  
ների համար, օրինակելի դպրոց, մի շարք դպրոցներ,  
հիւանդանոց, թանգարան, գրադարան, հանրամատչելի  
սեղանատուն:

— Ես հիացած էի նրա նկարագրած տեսարանով, չունչս բռնուում էր, դարձաւ պատմողը իւր ընկերներին: — Ես պատմեցի միտեր Ռայտին իմ նախկին տխուր մտած մունքները: Նա ձեռքը դրաւ ուսիս և ոգևորուած դէմքով ասաց.

— Դուք իրաւացի էք եղել: Մենք ցարդ եգիպտական բուրգեր՝ մուսիաների համար շիրիմներ էինք կառուցանում, միլիոններ դիզում: Այժմ՝ կըսկսենք ուրիշ շինութիւն: Մենք Սոլնեսի հետ կըսկսենք զանգակատուն շինել:

— Ի՞նչ Սոլնես, ի՞նչ զանգակատուն, — զարմացած հարցրի ես:

— Նորվեգացի յայտնի հեղինակ Իբսենը մի պիեսա ունի գրած «Վարպետ Սոլնես» վերնագրով: Սոլնեսը տարիներով աշխատում էր «հողի մէջ», տներ, գոմեր, ջրանցքներ և նկուղներ էր շինում: Նրա մօտ է գալիս Հիլդան, նրա պատանեկութեան ցնորքի առարկան, և դրդում է նրան զանգակատուն շինելու:

— Բարձրացիր դէպի վեր, Սոլնես, — ասում է նրան Հիլդան. — զանգակատուն շինիր: Թո՛ղ նրա բարձունքից երկրի վրայ ոչ թէ ծխնելոյզի ծուխ ու մօխիր իջնի, այլ լայն ու զօրեղ ալիքներով զանգի ձայնը հնչուի՝ մարդկանց դէպի բարին, դէպի եղբայրսիրութիւնն ու Աստուծոյ արդարութիւնը կոչելով:

— Այդ լաւ է. սկսենք զանգակատուն շինել, — ոգևորվեցին ունկնդիրները, և տեսնելով իրենց մօտից անցնող Միլտոն Ռայտին՝ հիացած կոչեցին:

— Վարպետ Սոլնես, զանգակատուն շինենք. կեցցէ զանգակատունը:

Ռայտը հասկացաւ այդ ցնծագին ողջոյնը, ուրախ ժպտաց ու ասաց.

— Սկսենք կառուցանել ուրախ և զուարթ հոգով, երգով ու երաժշտութեամբ. նստեցէք ձեր տեղերում, այժմ՝ պարոններ, կըսկսուի համերգը:

Ռուս. թարգմ. Մամբէ վարդապետ.

(Շարունակելի)